ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2024թվականի N 700

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 5-ՐԴ ՇԵՆՔԻ 23 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ
ԿԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 26-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի, Հայաստանի Հանրապետության 2019թ նոյեմբերի 19-ի N 225-Ն օրենքով, հաշվի առնելով «Լուսազանձ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 11.03.2024թ. տրված եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ, այն հանգամանքը, որ ինքնական իրականացված կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինքնական ձևափոխումն իրականացված չէ աստիճանավանդակների կամ շենքի արտաքին պատերի հաշվին, չեն փոխվել կրող կոնստրուկցիաներն ու սեփականատերերի բաժնային սեփականությունը, հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը՝ որոշում եմ.

1. Կարո Ռազմիկի Բուրնուսուզյանին, Անի Կարոյի, Անուշ Կարոյի Բուռնուսուզյաններին և Նարինե Ռաֆիկի Օզնեցյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք սեփականության վկայական 2206879) Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի 5-րդ շենքի թիվ 23 բնակարանին կից ինքնական իրականացված 10,71քմ մակերեսով կառույցը, ինչպես նաև ներքին ձևափոխությունները համարել օրինական /շափագրական տվյալների մուտքագրման տեղեկանք 2023CCVLXH/

2. Սահմանել, որ օրինական են ճանաչվում նաև սույն որոշման 1-ին կետում նշված շենքում առկա, շենքի ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից իրականացված բոլոր ինքնական կառույցները:

3. Շինությունների զբաղեցրած հողամասն անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով, փոխանցել Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի 5-րդ շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:

4. Կարո Ռազմիկի Բուրնուսուզյանը, Անի Կարոյի, Անուշ Կարոյի Բուռնուսուզյանները և Նարինե Ռաֆիկի Օզնեցյանը պարտավոր են ինքնական իրականացրած շինության և բացվածքի օրինականացման համար Նոր Հաճրն համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին վճարել 7450 (յոթ հազար չորս հարյուր եփսոս) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21-ը մարտի 2024թ. N 701

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԾՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՎԵՐԱԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006 թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետով նախատեսված ինքնակամ իրականացված կառույցները ճանաչել օրինական:
2. Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Ընդունել ի գիտություն, որ Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Նոր Հաճրն համայնքի Հ.Թումանյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.17554 հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 10-րդ գոտում:
5. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման :
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22-ը մարտի 2024թ. N 702
Նոր Հաճրն

ՀԱՍՅԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ**.

Նոր Հաճրն համայնքին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝

-Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, Զորավար Անդրանիկի փողոց, թիվ 1/1 հասցե:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2024 թվականի N 703

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2 387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

«ՏԵՍԱՐԱՆ ՓՐՈՋԵԲԹ» ՍՊԸ-ին պատկանող 07-064-0313-0175 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,21689 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանումից առաջացած

1. 0,04009 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S1 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8 հողամաս:
2. 0,02208 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S2 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8/1 հողամաս:
3. 0,02208 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S3 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8/2 հողամաս:
4. 0,02317 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S4 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8/3 հողամաս:
5. 0,02314 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S5 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8/4 հողամաս:
6. 0,02209 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S6 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8/5 հողամաս:
7. 0,02209 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S7 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8/6 հողամաս:
8. 0,03080 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S8 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8/7 հողամաս:
9. 0,01135 հա հողամասին / ըստ չափագրող Հ. Բելլոյան S9 / տալ հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Նոր Հաճրն համայնք, գյուղ Քանաքեռավան 8/8 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2024թ. N 704

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Նույն Մեյքսեթյանին տալ բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճըն համայնքի գյուղ Քանաքեռավան 3-րդ փողոց թիվ 4 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՒՌՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2024 թ. N 705
Նոր Հաճըն

ՓՈՓՈԽՎԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին >> N 596-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ**.

- Հաստատել՝ Արշակ Լյուդվիգի Մանուկյանի կողմից ներկայացրած՝ Նոր Հաճըն համայնք, գյուղ Քանաքեռավան 18-րդ փողոց, թիվ 58 հասցեի, 2022 թվականի օգոստոսի 12-ին թիվ 170 շինարարության թույլտվությամբ տրված, նախագծի փոփոխությունը (փոփոխված նախագիծը կցվում է):
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2024 թվականի N 706

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ **որոշում եմ**.

1. ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Արգել գյուղի վարչական տարածքում գտնվող Աշոտ Մխիթարյանին սեփականության /հիմք՝ ՀՀ Ազգային արխիվ ՊՈԱԿ-ի տեղեկանք N Հ-16385, 08.12.2023թ., կադաստրային ծածկագիր 07-014-0131-0006/ իրավունքով պատկանող հողամասին տրամադրել հասցե.

- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Արգել, 22-րդ փողոց, 4 այգետնակ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024թվականի N 707

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ, **որոշում եմ**.

1. Նոր Հաճրն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի մարտի 22-ի N 22032024-07-0194 վկայական) Նոր Հաճրն համայնքի Պարզևաշեն 1-ին թաղամասի 1-ին փողոցի 28/5 հասցեում գտնվող 48.9քմ արտաքին մակերեսով այգետնակը, 07-006-0041-0064 կադաստրային ծածկագրով 0.07 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած **Սուսաննա Սերյոժայի Ավետիսյանին**:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

3.1) այգետնակի մեկ քառակուսի մետրի համար՝ 6948 (վեց հազար իննը հարյուր քառասունութ) դրամ

3.2) առանձնացված հողամասի մեկ քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 6835 (վեց հազար ութ հարյուր երեսունհինգ) դրամ:

4. Սուսաննա Սերյոժայի Ավետիսյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին՝ **339.760** (երեք հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր վաթսուն) դրամ՝ շինությունների գինը.

2) համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին՝ **4.784.500** (չորս միլիոն յոթ հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է **Սուսաննա Սերյոժայի Ավետիսյանի** կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուսաննա Սերյոժայի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 708

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՎԱՐԱԶԴԿԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՇՈՒԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N 118-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Վարազդատ Հովհաննիսյան»-ի ներկայացրած հայտը և N 004363 /1696829926/ և 004362 /1370298213/ վճարման անդորրագրերը՝ որոշում եմ.

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Վարազդատ Հովհաննիսյանին (պետական հաշվառման համար՝ 80.852158) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Արտամեստ գյուղի 1 փողոց N 30 հասցեում գտնվող 98 քմ առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2024 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.

2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

25 ՄԱՐՏԻ 2024

ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 709

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՎԻԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ» ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N118-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Վիգեն Կարապետյանի» ներկայացրած հայտը և N 021 վճարման հանձնարագիրը՝ **որոշում եմ**.

1.Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր «Վիգեն Կարապետյանին» (պետական հաշվառման համար՝ 80.776263) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղի Ֆ.Թևոսյան փ. թիվ 223 հասցեում գտնվող, 85 քառակուսի մետր առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2024 թվականի ընթացքում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.

2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

25 ՄԱՐՏԻ 2024

ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 710

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՎԱՀԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ» ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N 118-Ն որոշման N 2-րդ հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Վահան Գասպարյանի» ներկայացրած հայտը և N 90926155 վճարման անդորրագիրը՝ **որոշում եմ**.

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր «Վահան Գասպարյանին» (պետական հաշվառման համար՝ 67.1370364) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղի Նոր Գեղի-Եղվարդ 3-րդ կմ-ի վրա գտնվող 24 քառակուսի մետր առևտրային մակերեսով ոչ հիմնական շինության ներսում 2024 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

25 ՄԱՐՏԻ 2024
ք.Նոր Հաճրն





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 711

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում գտնվող Ռուսլան Սլավիկի Բաբայանին և նրա ընտանիքի անդամներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին / կադ. ծածկ. 07-048-0095-0017/ տրամադրել հասցե.

-ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն գյուղ Նոր Գեղի, Հ. Թումանյան փողոց, 32 հողամաս:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 712

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում գտնվող Ռուսլան Սլավիկի Բաբայանին և նրա ընտանիքի անդամներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքիը / վկայական 369756/ վերահասցեավորել և տրամադրել հասցե.

-ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն գյուղ Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան փողոց, 56 շենք, 11 բնակարան:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՅԱՆ 7
Հեռ. (0-224) 4-27-70, 4-25-50
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25-ը մարտի 2024 թ. N 713

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴՀԱՅՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշմամբ, Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 27-ի թիվ 46-Ն որոշումով՝ **որոշում եմ**.

- Հովհաննես Կարմենի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճրն համայնքի, Թեղենիք գյուղի, 6-րդ փողոցի, 2-րդ փակուղի, թիվ 8 հասցեի (վկայական՝ N 24082015-07-0011, ծածկագիր՝ 07-032-0015-0038) բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ընդլայնման նպատակով՝ Նոր Հաճրն համայնքի, Թեղենիք գյուղի, 6-րդ փողոցի, 2-րդ փակուղի, թիվ 6/1 հասցեի (վկայական՝ N 18032024-07-0088, ծածկագիր՝ 07-032-0124-0095) բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.12265 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել վերը նշված անձին գործող կադաստրային արժեքով:
- Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված ուղղակի վաճառքով օտարվող հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:
- Սույն որոշման 1-ին կետի մեջ նշված անձի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
- Պարտավորեցնել՝
 - 4.1 Նոր Հաճրնի համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին վճարել հողամասի կադաստրային արժեքը՝ 2303000 /երկու միլիոն երեք հարյուր երեք հազար / դրամ:
- Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետի մեջ նշված անձի կողմից:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 714

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Արտամետ գյուղում գտնվող Ռիմա Արմենակի, Ռազմիկ Ալբերտի, Արմենակ Ալբերտի Պետրոսյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /վկայական 22022024-07-0036/ տրամադրել հասցե.

-ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Արտամետ, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, 3շենք, 28 բնակարան:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 715

**ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, **որոշում եմ.**

1. Նոր Հաճրն համայնքին Նոր Գեղի գյուղում սեփականության իրավունքով պատկանող 07-048-0058-0107-ից կադաստրային ծածկագրով 26,1քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 716

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և 912-Ն որոշումների, որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ**

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում Ֆ.Թևոսյան փողոց, 115/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0.01105հա մակերեսով, 07-048-0058-0107-ից ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասում ինքնական կառուցված 88,05քմ քառակուսի մետր արտաքին մակերեսով տնտեսական շինությունը համարել Նոր Հաճրն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Հաշվառման ծածկագիր՝ 2023CFTWXH):

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը :

4. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀԿԱԱԳԿՊԿ-ում:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնական կառույցներն իրականացրած **Ռուսլան Սլավիկի Բաբայանին**՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 717

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և 912-Ն որոշումների, որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ**

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում Ֆ.Թևոսյան փողոց, 6-րդ փակուղի, 6/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0.0018հա մակերեսով 07-048-0058-0060-ից ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասում ինքնակամ կառուցված 15,6 քմ քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը համարել Նոր Հաճրն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Հաշվառման ծածկագիր՝ 2023NBT4VC):

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը :

4. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀԿԱԱԳԿՊԿ-ում:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցներն իրականացրած **Ռուսլան Սլավիկի Բաբայանին**՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասի գրանցման նպատակաւոլության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 718

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում գտնվող Հովհաննես Մկրտչի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 07-048-0108-0099/ տրամադրել հասցե ըստ բաժանման սխեմայի.


1.1 Առանձնացվող հատված 1- 0.0246հա- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա.Խանջյան փողոց, 38 հողամաս

1.2 Առանձնացվող հատված 2- 0.02478հա- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա.Խանջյան փողոց, 38/1 հողամաս

1.3 Առանձնացվող հատված 3- 0.03238հա- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա.Խանջյան փողոց, 38/2 հողամաս

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2024 թվականի N 719

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, **որոշում եմ**.

1. Նոր Հաճրն համայնքում Նոր Գեղի գյուղում գտնվող Հովհաննես Մկրտչի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0108-0099 կադաստրային ծածկագրով 0.08176 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ